



ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎԲ ԱՐՄԷՆ

ՏՏՐԴ ՏԱՐԻ. ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 35

25 ՕԳՈՍՏՈՍ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Դպրեվանդ

ԵՆՈՎԲ ԱՐՄԷՆ

Մոլորումը

ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ

Գանգիւն Արամյան

ԹԷՈԴՈՒԿ

Ակզբունքի Խնդիր մը

ԱՐՄԵՆԱԿ ԻՆՃԷԵՄՆ

Հայիսը

Ն. ԵԱԶԸՃԵԱՆ

Լեւոն Փիլոսոփ

Սարսիմիայ Զատիկը

ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ

Տիկին Կրացցիա Տէլէսսա-ի

Էջ մը Երայական Փիլիսոփայութեան

ԴԱՆԻԷԼ ՆՇԱՆԵԱՆ

Պատմութեան

Հայագէտի մը Մանր

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱՐԸ. ՃԻՀՍՆ

1907

ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԹԵՐԹ ազգային, գրական եւ ֆադաֆական .—Բա-
 ժանորդագրութիւն Կ. Պոլսոյ համար 80 զրշ., դաւառներու համար՝
 108 զրշ. եւ օտար երկիրներու համար՝ 35 Փր. : Զեւքէ վաճառում՝
 թասը փարս : Հասցէ՝ Դալաթիա , Բամանաս փողոց : ԱՐԵՒԵԼՔ հրա-
 պարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ըն-
 ախր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով :
 ԱՐԵՒԵԼՔ, իր վերականգնուած խմբագրութեամբ եւ իր կարող աշխա-
 տակիցներով առաջնակարգ տեղ մը կը զբաւէ տեղական հայ մամուլին
 մէջ , օր աւուր աւելի՝ հրապուրիչ դառնալով՝ նորանոր բարեօքոսներու
 շնորհիւ, զորս ներմուծած է թերթին մէջ : Իր առաւելութիւններէն
 մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ ԸԼԼԱԼԸ հանգամանքը, որով իր ընթերցողնե-
 րուն կը ներկայացնէ պարբերաբար Ծանօթ Դէմքեր եւ երբեմն ալ տե-
 սաբաններ : Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուած-
 ները , եկեղեցական , կրօնական , տնտեսական-սեղանաւորական , եր-
 կրագործական , իրաւաբանական եւ այլն , բացի գրական , բանասիրա-
 կան զրուածքներէ , օրուան տեսութիւններէ ու Զուարթ Նօթերէ ,
 որոնք նիւթերու ճօն պէսպիսութիւն մը կը կազմեն :

ՓԱԼԱԳԱՇԵԱՆ ԱՂԶԿԱՆՅ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ , ԳԻՇԵՐՈՒԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵՍՅ

Կ. Պոլիս, Գասը-Գիւղ , Մեօհիւրսար հասէնի .

Յրդ Sarkhorzani


Մասնագէտ ուսուցիչներու եւ ուսուցչուհիներու ձեռամբ, տոնային
 ուսումներէ եւ գիտական անհրաժեշտ ծանօթութիւններէ զատ , հիմնա-
 կան կերպով կ'աւանդուին Հայերէն , Օսմաներէն , Փրանսերէն , Անգ-
 լերէն եւ Գերմաներէն լեզուները՝ հանդերձ խօսելալարժեքութեամբ (բռա-
 քի), ինչպէս նաեւ Գծադրութիւն , Տնարարութիւն , Կար ու Զեւ ,
 Ասեղնագործութեան զանազան տեսակները (ձեռքով եւ մեքենայով) ,
 ձայնական եւ գործիական երաժշտութիւն , մասնաւորապէս Դաշնակ եւ
 Զութակ : Գիշերօթիկները կը վայելեն կատարեալ անուշդ եւ ընտանե-
 կան անթերի խնամք , առողջապահիկ պայմաններու մէջ : Բանակցու-
 թեան համար դիմել վարժարան՝ Տեսուչին կամ Տեսչուհիին : Մանրամասն
 տեղեկութիւն կարելի է ստանալ նաեւ , Գշ . Եշ . Շր . օրերը ժամը 5էն
 9 դիմելով «ԴԱՐՈՒՆ» Դրատունը, Մեծ Նոր խան, վերի յարկ, թիւ 55 :
 Աշակերտուհիներու վերամուտը տեղի պիտի ունենայ Սեպտ. 3, Բշ . օր :

Հիմնադիր-Տնօրէն
Ե. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

ԺԱՄԱՆՅ ԵՒ ՏԱՂԱՆԴ

Սպասելով որ գաւառացի ընթերցողներ աշխատին քիչ մըն ալ մեր նախորդ Միտքի Զրօտանքին վրայ, ինչպէս առաջարկած էինք, այս անգամ կը ներկայացնենք ուրիշ մը, նոյնչափ զբօսեցուցիչ ու հետաքրքրաշարժ, որչափ առջինը: Մինչեւ Հորեքչարթի իրիկուն ճիշդ լուծողը Խմբագրութենէս իբր պարզեւ պիտի ստանայ իր լուսանկարէն 6 օրինակ, քապինե չափով, զոր պատրաստել պիտի տանք մասնաւոր խնամքով՝ մեր լուսանկարիչին, ներկայացնելով զինքը լուսանկարուելու: Գաւառներէն ճիշդ լուծողը պիտի ստանայ 100 այցաքարս իր անունով:

Ահաւասիկ խնդիրը. — Հետեւեալ եռանկիւնները դառաւորելով իրարու քով, կազմել հաւասարակողմեան ուղղանկիւն փառանկիւն մը, առանց ո՛ր եւ է մէկը դուրս ձգելու: Աւելորդ է ըսել թէ՛ եռանկիւնները պէտք է իրարու ադուցուին խնամքով՝ մէջտեղերը լայն ձգելով: Պատասխանները կ'ընդունուին Մասիսի կողքին վրայի եռանկիւններով կազմուած:



ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԱՄԵՆԱՎԵՐՋԻՆ ԴՐՈՒԹԵՍԱԲ կը դարձանէ ամէն տեւտակ տկուայի եւ լինտի հիւանդութիւնները, փառած ակտաները կը լեցնէ՝ առողջ ակտաներու պէս երկար տանն դարձածուելու պայմանով:

ԲՈՂՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՄԵԹՈՏՈՎ, նորը, ճաշակաւոր եւ՝ գիմակուն շարուհատական տկուաներ կը պատրաստէ, բնականին ճիշդ նման:

Հիւանդ կ'ընդունին ամէն օր իր դարձանտան մէջ, Բերա, Մեծ Բարձաք-Գաբու, թիւ 8: Կարօտ հիւանդները ձրի կը դարձանէ հինգ-չարթի օրերը՝ Բերտի Ազքատախնամ դարձանտանին մէջ:

Կիրակի օրերը ժամադրութեամբ կ'ընդունին:

ԽԱՍԻՍ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԵՏՐԴ ՏԱՐԻ. ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 35

25 ՕԳՈՍՏՈՍ 1907

ԴՊՐԵՎԱՆՔԸ

Արմաշի Դպրեվանքը այս միջոցիս ամէն ատենէ աւելի հան-
րութեան ուշադրութիւնը իր վրայ հրաւիրած է, և Մամուլ ու
Ժողովուրդ բացառիկ շահադրգուութեան մը հրատապ անձկու-
թիւնով սեւեռած են անոր ստանալիք վախճանին. Մեծ նշան-
մըն է ասիկա թէ՛ իրական criseի մը մէջ կը գտնուի ան,
որովհետեւ հանրութեան թմրած երեւակայութիւնը շատ քիչ ան-
գամ կը յուզուի իր կեանքին իրադարձութիւններէն. Իրողու-
թիւնը ան է որ՝ Դպրեվանքը նիւթական վտանգալի անձկու-
թեան մը մէջ կը գտնուի, և եթէ քիչ ատենէն արմատական
դարման մը չանօրինուի անոր, հիմնապէս քայքայուիլ, փակ-
ուիլ կը սպառնայ. Ասիկա անդարմանելի դժբախտութիւն մը
պիտի ըլլայ, զոր մեր համբաւուած ? եկեղեցասիրութեան
կեղծ պատուանոնը ո՛չ մէկ արդարացումով պիտի կրնայ դար-
մանել. Դպրեվանքը, մեր ա՛յն հաստատութիւնն է, որուն գո-
յութիւնը մեր մտաւորական կեանքի ձգտումներուն տեսակէ-
տով իր բարձր նշանակութիւնը ունի, և որմէ մեծ ակնկալու-

թիւնները ունի մեր հոգեւոր կեանքը և ընդհանուր եկեղեցականութիւնը : Դպրեւանքը այն կրթական վաւարանն է՝ ուրիշ կը սպասէ մեր եկեղեցականութիւնը առողջ, կենդանացուցիչ և մաքրարար այն Լոյսը, որ կրօնքի Պաշտօնէութեան կեանքը պիտի փրկէ՝ իր նեխած, վաթթարացուցիչ ու յետադիմական արթալուծներէն, առողջ կենդանութեան մը բարերար ապաքինումը շնորհելով անոր : Անիկա պէտք է որ կանգուն մնայ և պէտք է որ վառ պահէ իր գործունէութեան խոյանքը, հոգ չէ թէ մալուսանդ ու կարծամիտ պահպանողականութեան մը հնամենի բրածոյ ցանցաւ քուրմեր, իրենց մզլտած խնայականութեան աղօտ ու պղտոր ակնարկներովը՝ անվաւեր չտրիքի մը տարտամ հեռանկարը տեսնեն իր նշանակութիւնովը իրենց հասկացութեան անհաղորդ Լոյսի այդ Վաւարանին գմբէթներուն շուրջը :

Թէ ի՞նչ պատճառներ կը սպառնան անոր գոյութեանը, յայտնի՜ են : Դպրեւանքին խնամակալութիւնը հրաժարած է իր պաշտօնէն, զայն խնամակալելու, հետեւաբար նիւթապէս անոր օժանդակելու բարեյօժարութենէն, մինչ միւս կողմէ ծախքերը չեն դադրիր, Վանքը ուրիշ հաստատ ու որոշ եկամուտ չունի, իրեն բաւելու չափով. և ան նիւթական տաղնապարի անձկութեան մէջ է : Ունճեան Արիկ Էֆ.ի պէս առատաճեռն, ճշարտապէս եկեղեցատէր ու ողջամիտ անձ մըն է որ կը յշտնայ հաստատումին պէտքը Դպրեւանքին, և երբ ան կ'անհետանայ, իր յաջորդները, իր փոխանորդները, օժանդակները չեն կրնար ?, չեն ուզեր ? շարունակել իր գործը, պատճառներով, առարկութիւններով՝ որոնք արդարացուելու և ողջմտութեան իրաւունք չահելու, իրենց դերը արժեցնելու, գործերնուն ճանաչողութիւնը ու անոր նշանակութեան գիտակցութիւնը վաւերացնելու պատիւէն չ'աւ հեռու են : Մէկը հրաժարելու անձնական մասնաւոր, պատճառաբանութիւններ մը կը գտնէ, միւսը իրենց ձեռնասունը ելող Դպրեւանքի սանէ, մը ապերախութեան նշանի մը հանդիպելու, անկէ վիրաւորուելու պատճառները կ'աւարկէ . գործը կը լքուի ու մէջտեղը մարդ չմնար : Չեն գտնուիր նաեւ ամբողջ համայնքին մէջ գո՞նէ անունի համար այն տեսակ եկեղեցատէրներ, — կամ մէկ հատ մը, —

որոնք փոխանորդէն գործէն փախուստ տուող գառալիքներուն ,
 և չվտանգուի ճակատագիրը հաստատութեան մը, որուն կեն-
 սականութիւնը մեր համայնքին համար բացատրութեան ու շնչ-
 տուերու կարօտելէ հեռու է : Ի՞նչ անուն պէտք է տալ մանա-
 ւանդ պատճառաբանութեանը այդ գառալիքներէն մէկուն, որ՝ ա՛լ
 ամէ՛ն քող պատռած՝ ճրի բարերարի մը պատուանունէն մերկա-
 նալու և դ. ր ա կ ան ա պ է ս վ ճ ա ր ե լ ու ժամը հնչած ատեն ինք-
 զինքը ասպարէշլին վրոյ մինակ գտնելուն՝ կ'ապաստանի պա-
 տրուակներու , որոնք կուշտ քրքի՛ մը միայն կրնան առթել , և
 որոնք կոչումի ճանաչողութիւնը հաստատելէ հիմնովին զուրկ կը
 մնան, տեսքի, ցոյցի համար տնձնուէր հոգիի մը մէջ՝ որ ալ խօս-
 քէն, երեւոյթէն գործի՛ անցնելու ստիպողականութեանը տակ
 կը գտնուի : Մէջ վ ճ ա ր ե լ ու դ ժ ա ր ա ր ո լ թ լ ւ ն ք : Ձրլլա՛յ որ անիկա
 աւելի ծանր կշիռ ունենայ վշտակիր հրաժարումներու պա-
 տրուակներէն, փափկաղգած հոգիներու զգայուն նժարին մէջ :
 Ոչխարին մէկը մտրե՛ր է . պէ՛տք որ ատոր համար հովիւը
 դադրի միւսներուն ետեւէն վազելու և զանոնք հովւելու իր
 պարտքէն . կամ հողագործը պէտք է յուսահատի՞, անոր համար
 որ ցանած ցորենի հասկերուն մէջ անառակ կորեկներ ալ իրենց
 դուլիւր ցցեր են : Դպրեմանքցի Վարդապետ մը անարգական
 նամակ մըն է գրեր Դպրեմանքի պաշտպանի մը . ասոր համար
 պէտք է երեսէ ձգե՛լ միւսները և լքե՛լ գործ մը՝ որուն փուշի
 խայթոցներուն մէջէն վարդի փունջին տիրանալու հաճո՛յքը պէտք
 է որ գինովցնէ հոգին՝ իր ձեռքի պտուղին արժէքը ճանչցող
 ո՛ր և է պարտիզպանի : Է՛հ, ի՛նչ ընենք , թող հրաժարի՛ն , երբ
 ա՛յդչափ փափուկ է իրենց հոգին, փուշի մը խայթոցին՝ համար՝
 դրգալի վարդաստանի մը դէմ քստմնելու չափ , կամ երբ , —
 մ'անենք ճշմարիտ հողաբանութեանը մէջ գործին, — չա՛տ
 հասկնալի պատրուակներով փախուստներ՝ կը զօրեն մոռցնել
 տալ ա՛յնչափ բարձր արժէքով գործի մը ուխտը : Թող հրա-
 ժարի՛ն . բայց Դպրեմանքը պէտք չէ՛ որ քայքայուի, պէտք չէ՛
 որ մարի խոտմնալից , շողիւններով միացող բոյի մը լոյսը :
 Ձր՞ պիտի գտնուեր այդ Լոյսին հրահրուելուն անկեղծ հաճոյ-
 քովը վառուած հոգի մը , որ ուղէր առկայծել զայն , կենդա-
 նութեան հզօր շունչով մը : Ձր՞ պիտի գտնուեր ամբողջ հա-
 մայնքին մէջ : Մե՛ղք :

Մ Ո Ւ Ո Ր Ո Ւ Մ Ը

Ե.

Տարտամ և անդադարեղի տխրութեամբ մը հոգիւ լեցուած է : Ինքզինքս թոյլ կը զգամ և վատ . քանի որ է որ հակառակ ամէն ջանքի՝ չկրցայ եզրակացութեան մը յանգիլ . . .

Տարիներէ ի վեր կը սպասէի այս օրուան , երբեմն անձկութեամբ ու կասկածով լեցուն , երբեմն սիրտս յոյսերով օրորուն : Ու քանի այդ տարիները կը գլորէին՝ ա՛յնքան սպասումը անձկագին կը դառնար . քանի՛ օրերը կ'անցնէին ապարդիւն , այնքա՛ն ինծի կը թուէր թէ այդ օրը չպիտի գայ , ա՛հ , չպիտի գայ երբեք :

Այդ օրը եկաւ սակայն , երբ ալ չէի սպասեր գրեթէ , երբ սիրտս տխրած և մթին ինքն իր վրայ կը փակուէր , երբ կը զգայի տարտամօրէն իմ տարաբախտ հոգիին խորերէն երիտասարդութեանս և նաեւ գեղեցկութեանս ոգեւարը :

Գրեթէ դեռ տղայ՝ զգացած եմ որ աչքերը կը դանդաղին վրաս , լսած եմ հիացումի մրմունջները իմ անցքիս աւելի ուշ , գրեթէ առանց բացառութեան , ինծի մօտեցող այրերը դարպասած են . լռին և զսպուած կիրքեր նշմարած եմ խոնաւ աչքերու մէջ ու բոցալաւող զգացումներ : Եղած են որոնք իրենց զսպուած յուզումներուն սարսուռը փոխանցած են ինծի ու հրատապ ձեռքերու մէջ ձեռքս դողացած է հակառակ իմ կամքիս : Գիտակցութիւնը և զգացումը ունեցած եմ միշտ որ ուղածս կրնայի հրամայել իմ չրթունքէս կախուած և իմ նայուածքիս կարօտ անձերուն : Այլ սակայն , դարմանալի բան , անոնցմէ ոչ մէկը ինքնաբերաբար ձեռքս խնդրած է . . . : Եւ օրերը կ'անցնէին , ժամերը , րօպէները , լռին : Ի դուր նայուածքներ կը կառչէին ինծի , ի դուր շատ մը չրթունքներ համբոյրի տենչանքէն կը ամբուսէին և միայն հազիւ թէ կիրքի և սիրոյ մոլորումին մէջ կցկտուր բառեր , ձախաւեր յայտնութիւններ կը լսուէին չուրջս : Ինծի կ'ըսէին թէ գեղեցիկ եմ , բայց ոչ ոք կ'ուզէր այդ գեղեցկութիւնը : Արդեօք իմ նկարագրիս տարօրինակ գիծերը պատուար մը եղած են իմ և այրերու մէջ : Երբեմն ամէնէն յանդուգներուն աչքերուն մէջ իսկ՝ կարծած եմ տեսնալ տեսակ մը վարանում ու կասկած . . .

Ահ , քանի՛ անգամ , յիմարաբար փափաքած եմ առանց ծնողքի , փողոցի աղջիկ մը եղած ըլլալ , անկախ և տէրը զգացումներուս և կացութեանս և առանց վաղուան հոգը ընկուլ՝ քաղել ճամբուս վրայ բացուած բոլոր վայելքի ծաղիկները . . . :

Ինչ բաներու կը խորհիմ , Աստուածս : Անոնք որ կը տեսնեն իմ

ճերմակ ու մաքուր ճակատս՝ չեն կրնար մտքեր ուն անցընել թէ՛ ի՞նչ փոթորիկներ կ'անցնին երբեմն անոր ետեւէն . . . : Ի՞նչ սարսափ և ի՞նչ գայթակղութիւն՝ եթէ օր մը միայն հետեւէին հոն կաղմուող բոլոր յիմարտկան գաղափարներուն . . . :

* * *

Արդէն նշանուած եւ չաքայթէ մը ի վեր Արամին հետ ու դեռ չեմ կրնար ինքնիրենս համոզուիլ թէ՛ կ'ուզե՞մ զինքը թէ ոչ : Մտքիս մէջ սկիզբները իր գաղափարը եղբօրը գաղափարին հետ կը մարտնչէին ու ժգնակի : Վահէ կամաց կամաց տեղի տուաւ . . . անոր համար որ Արամին վրայ սկսայ գտնալ մէկիկ մէկիկ բոլոր այն նմանութիւնները՝ որոնցմով սիրած էի միւսը : Ի՞նչ չափով որ նախապէս իրարմէ տարբեր կը գտնայի զիրենք , այնքան հիմա Արամին ամենափոքր մէջ չարժու մին , դէմքի անցողակի մէկ արտայայտութեան մէջ միւսը կը գտնամ , և սիրտս , որ յարատեւ անձկութեան մը մէջ է , այս օրերս կ'ամօքուի մասամբ :

Անկեղծօրէն Արամը չեմ սիրեր ինքզինքին համար . անսահմանելի զգացում մը ունիմ իրեն նկատմամբ , որուն մէջ սարսափ կայ , վրդովմունք և տեսակ մը հեշտանք . երբեք այն ամբողջական և բնական ձգտումը՝ որով ամբողջ հոգիս՝ բոլորովին կուտայի Վահէին : Միայն երբ նմանութիւնը քիչ մը չեշտուի՝ սիրտս կը թեթեւնայ կարծես և տեսակ մը ապահովութիւն կը զգամ . նաեւ փափաքը ալ հանգչելու զիս վրդովող տեսակ տեսակ յուզումներէն :

* * *

Ապահովաբար անկարելի է . . . անկարելի է , ա՛հ , որ Արամին հետ ամուսնանամ : Ամբողջ մարմինս կ'ըմբոստանայ այդ գաղափարին : Երբ աչքերս կը գոցեմ , երեւակայութեանս մէջ կը տողանցուն այն տեսակ պատկերներ , որոնք զիս կը փոթորկեն և կը խաչեցնեն : Երբեմն կը կարծեմ թէ ալ չպիտի կրնամ նոյն իսկ զինքը տեսնալ : Զարմանալի զգացումներ նշանածի մը համար : Ամբողջ հոգիս խռովուած է և կարծես ներսս բան մը կայ , ինձմէ անջատ հոգի մը , որ ինձի այլանդակ և անհամ կատակներ կ'ընէ և այնքան ծիծաղելի կը դարձնէ զինքը որքան զիս : Եւ բոլոր այս յուզումներուն մէջ Վահէին գաղափարը սուր ցաւի մը պէս սիրտս կ'առնաէ : Օ՛հ , ալ չեմ կրնար զիմանալ , ալ անկարելի է :

Ամբողջ մարմինիս հրայրքը աչքերուս մէջ ապաստանած է . կարծես թէ անոնք պիտի այրին , այրին ու պիտի հառնին : Ասոր փոխարէն ա՛յնքան տաքոյն եւ որ՝ մարդ կը դարմանայ զիս ոտքի վրայ տեսնելով : Ամբողջութեան մէջ դէմքս այն տեսակ արտայայտութիւն մը առած է որ՝ տեսնողին տեսակ մը հոգ կը պատճառէ . . . :

Արամ սակայն աւելի հանդարտ ձեւ մը ունի , իր գործին վստահ
ըլլալու ձեւ մը և ասիկա երբեմն կը նեղացնէ զիս . . . : Իր աչքերուն
մէջէն գէշ հովի մը պէս կ'անցնի նոյն ոյն յաւակնոտ և ինքնավստահ
արտայայտութիւնը՝ որ ատենով այնքան հակակրօնի էր ինծի : Ինքը չի
տարակուսիր այդ բանին վրայ . ինչպէ՞ս կրնայ գիտնալ իր աչքերէն
մեկնող նայուածքը :

* * *

Զեռքը ձեռքիս մէջ էր . պարտէզէն կ'անցնէինք : Իրիկուան խո-
նաւութիւնը կը բարձրանար հողէն վեր , ջերմոտ և թանձր շողի մը
պէս : Յոգնած էի նայելէ : Արտեւանունքս կ'այրելին օրն ի բուն աչքե-
րէս ժայթքող տաքութենէն : Մեղմորէն ինծի կ'ատանորդէր պարտէ-
զին մէջէն : Մէկէն , գիշերին մէջ ինկող ծաղիկներուն բուրմունքէն
արեւցածի պէս՝ դեղեկեցի . գետինը կը պակսէր ոտքերուս տակէն :
Այնքան բան մէկէն ուղեցի ըսել Արամին , արագօրէն , արագօրէն .
դորովանքի տաքնապնդ և ատելութեան ցնցումներ կ'անցնէին մէ-
ջէս . . . : Զեռքս իր ձեռքին մէջ կը դողար . կ'ուզէի զինքը թողուլ
հոն և փախչիլ . . . : Ականջիս խօսքեր կը մրմնջէր՝ որոնք ինծի անհաս-
կնալի էին այդ միջոցին : Սրտիս մէջ վէրք մը կ'արիւնէր և կ'ուզէի
աղաղակել , բայց այդ ցաւի ճիչը 'Լաճե՛ կ'ըլլար չրթունքներուս վրայ :
Ա՛հ , ի՞նչպէս կ'ուզէի զինքը կանչել , պօռալ ետեւէն , 'Լահէ՛ . . . 'Լա-
հէ՛ . . . : Ու քարացած աչքերէս , կարծր արտեւանունքներուս ներ-
քեւէն քանի մը կաթիլ արցունքներ ժայթքեցին , կրակի պէս այրող ,
երեսս ի վար :

Ա՛հ , ի՞նչ գիշեր , ի՞նչ անձկութեան և տառապանքի գիշեր . . . :
Կը կարծէի որ ամբողջ երկինքը կը թաւալէր գլխուս վերեւ տենդա-
զին խոյանքով մը . . . : Ու տարօրինակ բաներու կը մոտձէի , անկա-
րելի վերադառնալու դէպ ի հոն , դէպ ի տարաշնորհները , անօրինակ
արագութեան մը անձնատուր . . . դէպ ի վեր , դէպ ի վեր . . . :

Ա՛հ , ի՞նչ գիշեր . . . երբեք պիտի ջնջուի՞ իմ մէջէն այն անձկա-
զին տառապանքը՝ որ դեռ կը թրթռայ հոգիիս մէջ : Ի՞նչ ունէի , Աստ-
ուածս . . . ի՞նչ կայ իմ մէջս՝ որ չեմ ճանչնար՝ չեմ գիտեր և որուն
անձնատուր եմ բոլորովին :

Մէկէն ականջներուս ետեւէն պաղութիւն մը զգացի , ցուրտ
պղպղակներ որ ծոծրակիս վրայ կը թափառէին և յետոյ մէկէն կուրծքս
ի վար կ'իջնային , սարսուռներ . . . ա՛հ , ակռաներս սեղմուեցան ,
ձեռքս գիտիկ ձեռքի մը պէս պաղեցաւ իր մատներուն մէջ : Զգացի .
անիկա կը մրմնջէր .

—Արուսեա՛կ , նայէ անդամ մը ինծի , կը պաղատիմ , ըսէ՛ , ի՞նչ
ունիս . . . :

Աչքերս բացի և յառեցի վերը երկինքին : Լուսնի արծաթեայ շողերը
կ'անձրեւէին վար : Շուրջս նայեցայ : Ծառերը կ'օրօրուէին մեղմորէն ,

իրենց գազաթնները օծուած կապտորակ ճերմակութիւնով մը ու երբ հովը կ'անցնէր բոլոր կանանչութեան վրայէն, հեշտազին մրմունջներ ունէին, խաղաղ սօսա իւններ՝ որոնք հովին հետ կ'անցնէին, կ'երթային . մինակ որթատունկին վրայէն հիւթի կաթիլներ միօրինակ և հաղիւ լսելի աղմուկով մը կ'իյնային գետնին վրայ :

Ու աչքերս դարձուցի իրեն , որովհետեւ կը պազատէր ինծի և որովհետեւ իր ձեռքին գգուանքը ու տաքութիւնը կը դգայի իմ պաղ ձեռքիս վրայ : Բայց անաւաղիկ կարծես թէ վարագոյր մը վերցաւ աչքերուս առաջքէն , պզտոր թափանցիկութեամբ վարագոյր մը , որուն մէջէն տեսած էի ցարդ Արամը : Լուսնի լոյսին տակ ձեռքս կաթնային ճերմակութիւն մը ունէր և տեսայ զայն լքուած անձեւ և թուի իր ձեռքին մէջ , որ ինծի անուիլ երեւցաւ և ոչ մարդկային . . . : Եւ այդ հակակրեւի ու խրաչեցնող թխտթիւնը իմ ճերմակ մարմնիս մօտ՝ այն տեսակ անդիմադրելի ըմբոստացումով մը զիս ցնցեց՝ որ սիրտիս խորէն գոչեցի .

—Անկարելի , անկալելի՝ բռն է . . .

Ներսէս ձայն մը կ'ըսէր .

—Աւելի աղէկ է չխորհիլ բնաւ . աչքերդ գոցէ ու հետեւէ ճակատադիրիդ . . .

Շուարած՝ Արամ չէր հասկցած ըսած , բայց աղաղակս զիս ամօքեց : Հեռոյճատ հանդարտեցայ եւ անասցի իմ ներքին ձայնիս : Զեռքս քաշած էի հիմա ու լուսնի լոյսին տակ երկուքս նստած էինք քով քովի , գլուխներնիս ծածկուած կարծես արծաթեայ սաղաւարտով մը . այնքան մեր գազաթնները ճերմակ կ'երեւային : Ծածրակիս վրայ կը դգայի լուսնի գգուանքը և խնկաւտուած օդը կը շարունակէր զիս արբեցնել . . . : Հեշտանքի , գորովանքի տենչանքներ կը լեցուէին հոգիիս մէջ : Գլուխս ծանր կը դգայի ու քիչ մը հակած՝ մօրիկ կ'ընէի : Ինքն ալ տխուր էր և կարծես կը նախադգար այն տաժանելի և փոթորկոտ կեանքը՝ զոր քով քովի կապուած պիտի վարէինք և որուն առաջին քայլերը առած էինք միայն : Ո՞վ գիտէ , եթէ կարենայի պրպտել իր հոգին , պիտի տեսնէի ընկրկելու փափաքը ու արհաւիրքը ինծի հետ սպրկելու գաղափարին : Զարմանալի երկչոտութիւն մը կար իր խօսքերուն և իր շարժումներուն մէջ : Մեծ և դղրդող բան մը անցած էր մեր վրայէն : Ես յոգնած և սղաւած , կը գիտէի զինքը , Վահէին պատկերին ընդմէջէն , որ լուսաւոր և յստակ կեցած էր մեր մէջտեղ ու բոլոր նմանութիւնները զորս իմ պզտոր գգացումներուս հետեւանքով վերադարձ էի իրեն , կ'իյնային մէկիկ մէկիկ , և այն Արամէն՝ որուն հետ ամուսնանալ յանձն առած էի՝ կմախք մը կը մնար միայն :

Դեռ մնացինք երկար ատեն լուռ : Որթատունկը միշտ կ'արտասուէր : Ու ծառերը կը տատանէին համաչափ օրօրումով մը . . . : Ժամանակը անցած էր . մեր դէմքերը սլայմանագրական ժպիտով դիմա-

կաւորուեցան սովորական, նշանածներու ժպիտով ։ Իրարու ձեռք սեղմեցինք առանց համակրանքի ։ Կրնայի խօսիլ, կրնայի մեր խոստումը քակել, վաղը ուշ պիտի ըլլար ալ ։ Վաղը ոչ ես քաջութիւն պիտի ունենայի որոշումի մը, ոչ ինքը . . . ։ Վայրկեան մը մնացինք, իրարմէ խօսք մը սպասելով ։ Բայց բան մը չըսի ու ինքն ալ լուռ մնաց ու մեկնեցաւ ։ «Պիտի ամուսնանանք», խորհեցայ ու զգացի որ ասիկա անգառնալի էր ալ ։

Ու երբ Արամին մեկնելէն ետքը ետեւ դարձայ տուն վերադառնալու համար գլխիկոր և դատապարտուածի պէս, անասունելի անձկութեան մը մէջ՝ որ ամբողջ հոգիս սեղմեց, զգացի որ սին պարանքի մը մոլորումին մէջ ամբողջ կեանքիս երջանկութիւնը վտանգած էի ։

ՋՍ.ՊԷԼ ԵՍՍ.ՅԵԱՆ

Վ Ե Ր Ջ

Գ Ա Ն Գ Ի Ի Ն Ա Ր Զ Ա Ն Ա Յ

(ԳՐԻԶԻ ԶԲՕՍԱՆՔ)

Հանդեսի մէջ ի՞նչ կը լըսեմք անպատճառ.

—Ճառ ։

Եւ ի՞նչ նիւթ ե՛ք գոր մեկ շունչով կը խօսին.

—Սին ։

Կնկան պէս ո՞վ հակամէտ ե պարելու.

—Լու ։

Անուշի չա՛փ, ջըղափ, դուք ի՞նչ կը սիրեք.

—Էգ ։

Ե՛րբ կ'զգասք թե՛ ան շեղի ե ֆան անուշ.

—Ո՛ւշ ։

Ապերախօը մերսի մը գեթ կը գոչե՞ք.

—Զե՛ք ։

Կոնակդ ի վար ի՞նչ վազցունեք խօսք մ'անկիրք.

—Բի՛րս ։

Սերն ի՞նչ կ'առնեք ասուլիսով միշտ թերեւ.

—Թեւ ։

Սոխեմ ֆիջ՝ ո՞վ կը ծնցունեք արտասուք.

—Սուգ ։

Վոթկած կընկան ի՛նչ անուշ սալ անկասկած.

—Բա՛ժ ։

Ջերմ սարիանքներ ի՞նչ կը դառնան ան յայտդ.

—Պա՛ղ ։

Աֆորի տէր՝ ո՞ր հաւն է որ ճու չ'ածեր.

—Ծեր:

Կեանքի անասնն ո՞վ է շարժող շատ աղէկ.

—Ղեկ:

Օրին մեկը երբոր կոտրի, քան կ'ըլլա՞նք.

—Լա՛նք:

Ի՞նչ կը տեսնայ մարմինը խոնջ ու նշկուն.

—Քուն:

Սիրին անտար ի՞նչ հասու է զերդ տուներ.

—Սեր:

Կը վայելե՞ յարգանք՝ հիւր մը ինքնակոչ.

—Ոչ:

Ի՞նչ խորք ունի շանչեր փարքաւ ու մըտն.

—Սուտ:

Ո՞վ չ'ունկնդրեր մեր սիրտերուն քունն զարկին.

—Կին:

Ի՞նչ կը պահէ կոտորած սիրտ մը ապաքին.

—Քեկ:

Ի՞նչ կը կոչուի յունկեսս պարպոյն իր իշտակ.

—Սագ:

Ո՞ր քանն է որ միտքը ճրգէ տարակոյս.

—Կոյս:

Դիտե՞ք՝ աներեւոյ՝ պղնձի մը խօշարար.

—Պար:

Արու սիրտին գոյութիւնը ո՞վ կ'ընէ.

—Նե:

Ի՞նչ կը դառնայ երբոր ուտէ մարդ սաստիկ.

—Տիկ:

Կա՞ն աղջիկներ՝ դեմքով, կամքով տրակամ.

—Կան:

Սեր-քոյմիկը ի՞նչ կ'որոնէ անդադար.

—Թառ:

Բայց ոտներուն ի՞նչ հանդիպի շատ անգամ.

—Դա՛մ:

Ի՞նչ է կին մը իր վարմունքովն արտաոյց.

—Օ՛հ:

Խա՛րուէրունք պէս՝ Աղաւ կընոյն ի՞նչ հոծեց.

—Ծե՛ծ:

Ո՞վ Սերին հետ կ'ընթանայ միշտ գուգահետ.

—Հե՛ն:

Ո՞ր մարդիկը ըզմեզ իրե՛նց կը փաշեն.

—Շեկ:

Դրպաննին ծակ՝ ո՞ր անձերէն կը խորշիք.

—Շիք:

ԹԻՌԴԻԼԷ

Հ Տ Պ Ի Տ Ը

Բ.

Հանրթօն կը դիտէր այս ամէնը , և կը խորհէր որ այդ թշուառականը հակառակ իրեն պէս տձեւ և տգեղ ըլլալուն , հակառակ խեղկատակի բռնի ծամածռումներուն՝ իրմէ աւելի երջանիկ էր , որովհետեւ անդադար չփութի մէջ էր հրաշագեղ ձիամարդուհին հետ , որուն հրապոյրը և հաղուադիւտ գեղեցկութիւնը բնազդորէն կը խելայեղէին զինքը :

Ներկայացումին մտնող տեղութեանը , Հանրթօն կարծես երազային աշխարհի մը մէջ էր ապրած : Պր . Վէրնիէի գրասենեակը , մզկոտած պաշտօնաթղթերը , ժողովուրդին իրեն հանդէպ տածած արգահատանքը , իր տգեղութիւնը՝ կարեւորութիւն չունէին ալ իրեն համար : Խեղճ Հանրթօն , իր բոլոր խորհրդածութիւնները , իր երազները դէպի անոր կը սաւառնէին , նման այն պղտիկ փունջերուն , որոնք իր յաղթանակին համար կը մատուցուէին :

Սակայն Հանրթօն ինչ որ ըրաւ , որքան արտակարգօրէն որ ծափահարեց , դարձեալ գեղանի կ'ընէր նշմարեց զինքը , իր ձիով քովէն անցած միջոցին իսկ : Չափազանց մօտէն հիացած , կրցաւ անոր դիմագիծերուն կանոնաւորութիւնը , մազերուն գոյնը , աչքերուն երանգը չրթունքներուն ծաղրական , շարժումները , մատներուն պրկումները աղէկ մը ուսումնասիրել : Եւ տեսաւ որ , կը ժպտէր ան : Բայց այդ ժպտը , այդ թշուառական և կոշտ հտպիտին ուղղուած էր , որ քովի վեր ցատկելով շրջանակներուն մէջէն կ'անցնէր :

Կատաղի , մոլեգին ծափահարութիւնները կը դըրդեցնէին Սիւքը հետզհետէ , և ինքն ալ այնքան ահուելի կ'երպով , այնքան եռանդով սկսաւ ծափահարել որ՝ վերջապէս դէպի իր կողմը դարձաւ ձիամարդուհին և շնորհակալութեան գլխու շարժում մը ըրաւ : Շանթի հարուած մը եղաւ ատիկա իրեն համար : Ձինքը նշմարած , իրեն ժպտած էր : Այլ չէր կրնար իր երջանկութեան վրայ տարակուսիլ , և զգայախաբի մը պէս դուրս ելաւ սրահէն , և դէպի անոր օթեակը ուղղեց իր դողդէղացող քայլերը : Ձիամարդուհին ընկողմանած՝ ցած , կակուղ բաղմոցի մը վրայ , յրտօրէն ընդունեց զայն , և անոր այցելութեան պատճառը հարցուց : Հանրթօն կակաղել սկսաւ , չգիտնալով ինչ պատասխանել , և վերջապէս ըսաւ թէ կը սիրէր զինքը :

— Վստահ կրնամ ըլլալ որ կը սիրէք զիս , Պարոն , պատասխանեց , բայց ամէն պարագայի մէջ արուեստագէտ մը միայն կրնամ սիրել :

Եւ այս խօսքերը այնքան պաղ կ'երպով մը արասանեց որ Հանրթօն բոլորովին չփութած դուրս նետուեցաւ օթեակէն :

Վէրնիէի պաշտօնատնի իր տխուր և նեղ սենեակը վերադառնալով

մոմը վառեց : Ձի կրցաւ պառկիլ : Ճակատը ձեռքերուն մէջ երկար ատեն խորհեցաւ միջադէպին վրայ : Ամէնէն առաջ երեւակայութեանը առջեւ պատկերացուց Սիւքին ամբողջ տեսարանը : Ձէր կրնար յիշել թէ՛ ի՞նչպէս կրցած էր մինչեւ անոր օթեակը երթալ և հետը խօսակցիլ : Բնաւ ինքնիրմէն չէր սպասեր որ այդքան համարձակ կրնար ըլլալ : Հակառակ իր առաջին ձեռնարկին մէջ անյաջող ելլելուն , նկարագրի տէր մարդ մը ըլլալուն գոհացումը կը թեթեւցնէր անյաջողութենէն զգացած կսկիծին ծանրութիւնը :

Մոմին բոցը կը դողդղար , անորոշ նշոյլներ արձակելով , որոնք սեղանին վրայ տարտամ ցոլքեր կը գծազրէին . և իր խորհուրդները գանկին մէջ կը տարտամային այդ ցոլքերուն պէս : Տունը ամբողջ խորունկ քունի մէջ էր և անուշտ ոչ ոք միտքէն կ'անցընէր թէ , այդ ժամուն նոտարին այդ սարուկ պաշտօնեան ի՞նչ անմիտ մտածումներ կը յղանար միտքին մէջ :

—Արուեստագէտ մը միայն կրնամ սիրել , ըսած էր իրեն :

Յետոյ յիշողութեանը առջեւ կը պատկերացնէր Հոսպիտը : Իրեն պէս կուզ էր ու կեղծամն ալ իրեն մագերուն դոյնը ունէր : Բայց այդ հոսպիտը տաղանդ մը ունէր՝ որմէ զուրկ էր ինք . այդ հոսպիտը ձեռքերուն վրայ ցատկել և չրջանակներու մէջէն անցնիլ գիտէր : Ինք կեանքին մէջ նոտարին նամակները ընդօրինակելէն զատ ուրիշ փորձ ըրած չէր , այնպէս որ ձեռքերը գիր գրելէն փայտացած էին : Բայց իր կորովը այնքան զօրացած էր իր մէջ , որ որոշեց անմիջապէս , առիթը ձեռքէ չփախցնել , փորձել . և գոհ՝ այդ որոշումին վրայ քնացաւ յաղթական ապագայ մը երազելով , ակնախտիդ գոյներով դրուագուած երազի մը մէջ , որ մոռցնել պիտի տար յաւիտենապէս , իր քաշուած տխուր կեանքին կսկծագին դառնութիւնները :

Յաջորդ իրիկունը , Սիւքին մէջ միեւնոյն տեղն էր : Ձիամարդուհին երեւցաւ ձիուն վրայ հեծած , ժպտագէտ , նախորդ դիշերուն ծափահարութիւնները վերյիշելով : Ձեռքերը արդէն սկսած էին իրարու բաղիլ յաղթական ձեւով մը , երբ ձայն մը բարձրացաւ , Սիւքին մէկ կողմէն :

Ոչ ոք նշմարած էր հոսպիտը , որ ներս մտած էր ձեռքերուն վրայ քաշելով : Բայց յանկարծ ձին ոտքի կենալու միջոցին առջեւի ամառկովը զարկած ձգած էր մոխրագոյն փոշիին վրայ , խեղճ , պզտիկ , ներկուած հոսպիտը , արիւնոտելով անոր ճերմակ , խոշոր տաքատը :

Մէկ ոտտոււմով մը ձիամարդուհին թամբին վրայէն վար ցատկեց , և անոր քով ծունկի եկած , կը հարցափորձէր զայն և իր փափուկ , բուրբումաւէտ ժանեկազարդ թաշկինակովը դէմքը կը սրբէր :

Ահադին աղմուկ մը յառաջ եկած էր , ամէն ոք կ'ուզէր անոր քով խոյանալ . բայց սպասաւորները խեղճ հոսպիտին մարմինը պատգարակի

մը վրայ դնելով Սիւքէն դուրս հանեցին : Եւ սարսափած՝ Օր. Սիկալ վերսկսաւ իր այնքան ցաւալի կերպով ընդհատուած փորձերը : Հանրթօն դիտեց այս ամէնը : Հակառակ վտանգներուն , հակառակ իրեն անծանօթ եղող արուեստի մը դժուարութիւններուն , անհուն փափաք՝ մը կը կրծէր ներսիդին այդ դժբախտ մարդուն տեղը ըլլալու : Եւ նոյն իսկ կը փափաքէր իյնալ օր մը անոր առջեւ , որպէս զի իր մահամերձի ճակատը զովացնէր իր պղտիկ սիրուն ձեռքերովը , և մեղմէր քաշած տառապանքներուն սաստկութիւնը : Կ'երազէր այդպէս , երբ վարիչը ներկայանալով ազդարարեց որ խեղճ հապիւրը հարուածին ուժգնութիւնէն մեռած էր : Ներկայացումը շատ տխուր տպաւորութեան մը տակ վերջացաւ եւ ամէն մարդ հեռացաւ իբր թէ յուղարկաւորութենէ մը մեկնէին : Հանրթօն միւս մինակ մնաց : Եւ երբ բոլոր հանդիսատեսները վայրէջն հեռացան , հաստատ քայլերով մօտեցաւ վարիչին և ըսաւ .

— Պարոն , ականատես եղայ քիչ մը առաջուան արկածին , որ հարուածեց ձեր ամէնէն կարող արուեստագէտներէն մէկը : Անշուշտ խումբին համար անհրաժեշտ մէկն էր : Կը խնդրեմ որ զիս անոր տեղը անցընէք :

Վարիչը մէկ ականարկով չափեց գլուխէն մինչեւ ոտքը. նշմարեց որ կուղ էր ան , մաղերը կարմիր , դէմքը տգեղ , անդամները տծեւ ճիշտ միւսին պէս : Անակնկալ բախտ մըն էր աս :

— Ընդունուած էք , Պարոն , ըսաւ :

Յաջորդ օրը իսկ խումբը կը մեկնէր քաղաքէն. Պարոն Հանրթօն ալ միասին :

Ամէնէն առաջ ջանաց որպէս զի Օր. Սիկալին ականարկներէն վրիպի : Չէր ուղեր որ անմիջապէս երեւան հանէր իր վարպետութիւնը , Կ'ուզէր սպասել : Մօտակայ քաղաքին մէջ պիտի խաղային . հոն միայն պիտի ցուցնէր ինքզինքը : Եւ ճամբորդութեան ամբողջ տեւողութեանը , կապիկներուն , թութակներուն և ծառաներուն մէջ փորձեց ձեռքերուն վրայ ցատկել և դէմքին վրայ արտասովոր դիմագիծեր յօրինել : Առաջին ներկայացումին իսկ կը փափաքէր նպատակին հասնիլ իր ճարպիկութեամբ , մանաւանդ կ'ուզէր որ անկէ նշմարուէր . . . :

Տասնըհինգ օր ետքը քաղաքին մէջ ներկայացումը ծանուցուեցաւ պատերուն վրայ փակցուած ազդարարութիւններով , որոնց ոսկեղօծ տառերը արեւին տակ կը շողշողային .

ՕՐԻՈՐԴ ՄԻԿԱԼ

(Զիամարգուի)

ՊԱՐՈՆ ՀԱՆՐԹՈՆ

(Հօպիս)

ԻՐԵՆԵ ԶԱՆԱԶԱՆ ՓՈՐՁԵՐՈՒՆ ՄԷՋ

Զիամարդուհին շատ զտրմացաւ իր անունը օտարականի մը անունին հետ տեսնելով, և իրիկունը, երբ ամփիթատրոնին մէջ երեւցաւ, իր առաջին գործը եղաւ նոր հոգիար տեսնել: Բայց կատարելագէտ անճանաչ դարձած էր ան, տյնքան ալլափոխուած էր. և իր կեղծամը ու մորուքը այնքան կը նմանէին միւսին որ՝ վարկեան մը ցնորքի մը խաղալիքը ըլլալ կարծեց Օր. Սիկալ:

Փորձերը սկսան. հանդիսատեսները գրեթէ ապշած մնացած էին Հանրթօնի թեթեւաշարժութիւնը տեսնելով: Միւսին պէս երկու ձեռքերուն վրայ կը կենար և թեւերը աղեղնակորելով այն տեսակ ուժով մը ու այն տեսակ արագութեամբ մը կը ցատկէր որ՝ քանի մը երկվայրկեան օդին մէջ անշարժ կը մնար և իր ճաթած ձայնովը կը կրկնէր:

— Հանրթօն, թսի'ր, Հանրթօն, թսի'ր...

Յաջողութիւնը հոյակապ եղած էր: Օրիորդ Սիկալ կը հիանար նոր հոգիարին տաղանդին վրայ: Հանրթօն կը հետեւէր անոր անփիթատրոնին մէջ, և հիմակ երկուքը մէկտեղ փորձերնին կը կատարէին, մէկը զեանին միւսը ձիւն վրայ: Ներկաները միեւնոյն յափշտակութիւնով կը չրջապատէին զանոնք, և ծափահարութիւնները դէպի անոնց կը մեկնէին, իբր թէ մէկ անձի մը ուղղուած ըլլային անոնք: Երկուքն ալ թմրկած չրջանակները ծակած, փոսերուն և արգելքներուն վրայէն անցած և լոյսերուն աղօտ ցոլքերուն տակ ցնորալից արագութեամբ մը կը դաւնային, մէկը ձեռքերուն և ոտքերուն վրայ ցատկելով, իսկ միւսը հետեւելով հոգիարին, յափշտակուած անոր այս արտասովոր թեթեւաշարժութիւնէն: Զին կը յառաջանար հանդարտօրէն, սանձերէն բռնուած փափուկ ձեռքերովը ձիամարդուհին. կապիկները չուաններուն վրայ կը զուարճանային պոչերնին խածնելով. թութակները կը շատախօսէին, ջանալով զիրար գերազանցել: Եւ վարիչը Սիւքին սեմին վրայ կեցած թեւերը խաչածեւ, կը դիտէր իր նոր հոգիարին փորձերը, հմայուած և ապշահար: Իսկ, Հանրթօն կը սաւառնէր դէպի իր երազը, կը բարձրանար իր իտէալին, կը հրճուէր, երջանիկ, այլափոխուած, ամպատում երջանկութեան մը տեսլականին մէջ փոխադրուելով և խօս երազներու դրախտին մէջ կորսուելով: Յաջողութեան գագաթնակէտին կը մօտենար, որուն այնքան ատեններէ ի վեր, միշտ երազած էր հասնիլ: Օգային երջանիկ ոգիի մը պէս դէպի լուսաւորները կը վերանար: Զիամարդուհին գեղեցկութիւնը գրաւած ըլլալու փառք կը զգար իր մէջը և ձիամարդուհին լուսաճաճանչ դէմքը իրեն կը ժպտէր: Ցնորակոծ ձայնով մը կը պոռար:

— Հանրթօն, թսի'ր...

Իրաւցնէ կը թռէր... դէպի երկինք կը թռէր. լուսաւորներու ճաճանչումին ճառագայթներուն, ծաղիկներու աշխարհին, սիրոյ կեանքին և ուրախութեան մէջ կը լողար:

Աւա՛ղ, խեղճ յիմար, խեղճ յիմար մարդ :

Այնքան բարձր ցատկեց որ վար իջած միջոցին տախտակին եզերքին դարնուեցաւ : Գլուխին վրայ ահուկի վէրք մը բացուած էր : Իր վտիտ մարմինը անշարժացաւ, ձեռքերը դեանին վրայ տարածեց, ներկուած դէմքը ժողովուրդին կողմը դարձուցած . և աչքերը բացած հանդիսատեսներուն վրայ՝ մարած նայուածքներ կը պտտցնէր, ճիշտ միւսին պէս . . . : Ներկաները ոտքի ելան յուզուած, դողդոջուն : Ամփիթատարոնէն դուրս հանելով, անկողինի մը վրայ դրին հապկաին մարմինը . զովացուցիչ ըմպելիներ կը հաոցնէին ամէն կողմերէ և ձիամարզուհին չտապով վազելով, կեղծամին տակէն կ'ուզէր դէմքը ճանչնալ :

Սոսկալի ճիչ մը արձակեց : Կինը վերջապէս ճանչցած էր տձեւ և երկչոտ երիտասարդը, որ ըսած էր թէ կը սիրէ զինքը :

Ի՞նչ, դիտումո՞վ ըրած էր արդեօք, դժբախտը . . . : Կուլար հիմակ, հապկալը գրկելով :

— Արուեստագէտ մը . . . բայց սքանչելի արուեստագէտ մըն էք դուք : Խոստումս պիտի կատարեմ, պիտի սիրեմ ձեզի, ճշմարիտ և անկեղծ սիրով :

— Շատ բարձրէն ցատկեցի, ըսաւ հապկալը ականջները տակաւ մարելով կոկորդին մէջ : Երազս զիս մեռցուց . . .

Չայնը կը տխրաստար հետզհետէ : Ուժեղը յամբարար խոյս կուտային իր էութենէն : Մեռելային տիգունութիւն մը կամաց կամաց կ'այլափոխէր երեսը . իր ջախջախուած գլուխը՝ բարեկամուհիին ձիւնաթոյր փափակ ձեռքին վրայ ինկաւ : Յանկարծ ցնցուեցաւ մարմինը, սաստիօրէն՝ գալարուելով անկողինին վրայ : Մեռած էր :

Մօտիկը՝ թութակ մը կը կրկնէր անդիտակցարար .

— Հանրթօ՛ն, թռի՛ր . . .

Աւա՛ղ, իր հօգին էր որ կը թռէր այս անգամ . . .

ԷՏՄՈՆ ՓԵԼՈՆ

Թարգմ. Ն. ՆԱԶԵՃՅԱՆ

ՍԱՐՏԻՆԻՈՅ ԶԱՏԻԿԸ

Աւագ Շաքաթ օրը Աբօլօնիա ֆառա իր շքեղ անկողինէն ելաւ այն պահուն, երբ արշալոյսը պատուհանին միտկտուր ապակիին վրայ իր խաժակ շողքը կը խաղցնէր : Կոշտ ապակի մըն էր տն թէև, բայց հիանալի տեսարան մը կը ներկայացնէր : Նոր գարունին թարմութիւնը դուռնափայ շողերուն տակ Բուռնիի գաշտանկարներէն մէկը պիտի կարծուէր : Բլուրի մը զառիւլարը, կապուտակ առու մը՝ որ օձի պէս կը յառաջանայ . հոս հոն քանի մը ծառեր, գեղեցիկօրէն զետեղուած, իրենց գալար ձեւերը ծածկուած քնքոյշ տերեւներով . ամէն կողմ՝ դալար բլիթ, մաքուր գալարիք մը՝ որ անբժութեան ու տպաւորութիւնը կը ծնի : Աբօլօնիա պատուհանէն երկինք կը նայէր, դեզին ու կարմիր հա-

գուետը հագնելով . յետոյ դնաց նայելու ջրէշներով հիւստած կողովի մը խորը , մինչեւ բերանը լեցուն առտուրնէ մինչեւ իրիկուն պատրաստուած ու ալիւրէ շինուած կարկանդակներով , և որուն վրայ մատովը խաչի նշանը շիներ էր , որպէս զի լաւ եփի կարկանդակը : Կարկանդակը ազէկ մը ուռեցած էր , ուզածին պէս : Դեռատի կինը իր ճերմակ և ուժեղ թեւերուն վրայ առաւ կողովը՝ խոհանոց տանելու համար . հոն կարկանդակը թրեց , փուռը վառեց ու խահուէն պատրաստեց : Վարդադոյն ու մեղմ լուսածագին հետ տեսակ մը մտահոգութիւն կը պատէր զինքը . կը խորհէր . « Ժամը ութին պիտի գայ , թերեւ իննին , թերեւ աւելի ուշ , թերեւ վաղը . Յիսուս , իմ անուշ Յիսուս . . . բայց ես չեմ ուզեր ալ անոր վրայ խորհիլ . . . Երբ կ'ուզէ թող դայ » : Բայց հակառակ իր կամքին , նորէն միեւնոյն խոհերուն մէջ կը մխրձուէր : Այն անձը որուն կը սպասէր և կը վախնար այցելութենէն՝ երիտասարդ երէցն էր , որ գիւղին չըջանը պիտի ընէր , ամէն տուն վանքին օրհնութիւնը տանելու : Քանի մը տարիներ առաջ , հէք երէցը իր նշանածն էր , բայց ինք լքած էր զայն , հարուստ հովիւի մը հետ ամուսնանալու համար : Երիտասարդը խնթի պէս սիրահարուած , անձնատպան բլաւ փորձեց , կուրծքին ատրճանակ պարպելով : Ծնողքը ու բարեկամները մեծ դժուարութեամբ կրցան փրկել զինքը : Այն ատեն երկիրէն մեկնեցաւ ու քահանայ եղաւ : Ծառ չէր ընէր որ վերադարձած էր իբր երէց և ամէն անգամ որ Աբղօնիական կը հանգիպէր՝ թեթեւօրէն կը տփուէր : Սակայն Աբղօնիան առանց ո'ր և է յուզումի կը նայէր երէցին : Այդ առտուն սակայն կը տանջուէր մտածելով թէ՝ իր տունը պիտի մտնէր ան՝ օրհնելու համար իր հացը ու անկողինը՝ որ անպատեղ մնացած էր : Երբ պզտիկ պատուհանը բացաւ դիտելու համար այն թափորը՝ որ կ'առաջանար երգերու մէջէն և երբ նշմարեց հիշար ու ցաւազին դէմքը երէցին , խորունկ խռովք մը զգաց իր հոգիին մէջ : Բայց դարձեալ շարունակեց դիտել թափորը , եօթը սուրբով օրաէն ծակուած Աստուածամայրը , որ իր մեռած Զաւակը փնտռելու կ'երթար , դաշտերու երաժիշտները , սգաւոր կիները , մինչև որ անցան ու անհետացան ճամբէն : Յետոյ վերադարձաւ փուռին ու կարկանդակին . Զաւակուն համար հացը շինեց , ճեփ-ճերմակ հաց մը , կտրուած ու ծակողէն , ալիւրէ շինուած անուշեղէններ , ինչպէս նաեւ թարմ պանիթ շինուածներ , յետոյ պզտիկ կարկանդակէ շինուած պատկերներ , պզտիկ աղաքներ , թռչուններ : Ամայի տանը մէջ անհուն լուսիւն մը կը արնայտէր և արեւով ողողուած էր ամբողջ գիւղը : Կոչնակները ձայն չէին հաներ , Տէրջը մահուան առթիւ բոլորն ալ կապուած : Միտակ մացառներուն մէջէն վախկոտ թռչուններու ճիւղեր կը բարձրանային և կը մարէին անմիջապէս , կարծես ոտակացած այն լուսթենէն՝ զոր կը խանդարէին : Ժամերը կ'անցնէին և երէցը չէր գտր : Ժամը

տասնին , Աբօլօնիա օգին մէջ սարսուռի մը անցնիլը զգաց . վեր ցատկեց ու մոխի ըրաւ . կօշնակները կը հնչէին և իրենց առաջին զարկերուն մէջէն գոռում մը պայթեցաւ : Յետոյ ուրիշ մը , երեք հատ , տասը հատ , հարիւր հատ նորէն : Աղաղակներ և ուրախութեան ձայներ կ'ընկերանային զանգակներուն երգերուն : Ու չորս կողմ կ'արձագանգէին բոլոր այդ երջանիկ ձայները կալուօշներու խումբեր կ'անցնէին գիւղին մէջէն երգելով :

Աբօլօնիա իր հացը , կարկանդակները ու բոլոր Զատիկուան պարէները շինեց լմնցուց , ցօրեկէն վերջ դրացիներուն , բարեկամներուն , ազգականներուն հետ փոխանակեց հացէ , կարկանդակէ ու միսէ նուէրներ : Ամէն անգամուն ալ կը հրճուէր տեսնելով թէ՛ իր տուածը միշտ աւելի ձերմակ ու աւելի լաւ շինուած է : Իրիկունը ամուսինը վերադարձաւ իր գիւղեցիկ ձերմակ ձիուն վրայ հեծած , մախաղը լեցուցած պանիրներով ու երկու պղտիկ դառնակներով , մէկը ձերմակ , միւսը սիւն , որոնք Զատիկուան խնջոյքին համար պիտի գործածուէին : Աբօլօնիային ամուսինը հարուստ էր : Հետեւեալ օրը Աբօլօնիա կանուխ լուսածագին նորէն ելաւ , Զատիկական խնջոյքը պատրաստելու : Մինչ արեւը ստիկաւ ըլլորին վրայէն կը ըսրճրանար , դեռատի կիներ , կարգադրած խոհանոցին գործը , առջի օրուան միւսնոյն սարսուռը կը զգար երէցին այցելութեան վրայ խորհելով :

Ժամը իննին , Աբօլօնիայի դռան առջեւը հասաւ , որ գիւղին վերջին տուններէն մէկն էր : Մախաղը արդէն լեցուած էր ու լողուն ձեռքի դոյլը ալ գրեթէ խճողուած հաւկիթներով ու դրամով : Երէցը ներս մտաւ , առանց արտօնութիւն խնդրելու և առաջին անգամ ըլլալով՝ Աբօլօնիան տեսաւ՝ առանց տփուռնելու , մինչ ան կը տփուռնէր : Պիտի օրհնէր թէ պիտի անիծէր երէցը այն տունը՝ ուր կ'ապրէր երջանկօրէն ինք՝ որ զայն մահուան դուռը նետեր էր . . . : Այս սարսափելի հարցումը կ'ընէր Աբօլօնիա ինքզինքին , ցաւագին մտաւորութեամբ մը , որովհետեւ սարտինիական գիւղերու մէջ կը հաւատն թէ քահանաները կրնան սուրբ գիքերու շնորհիւ օրհնել ու անիծել իրենց կամքին համաձայն : Բայց երբ երէցին ներշնչուած դէմքը տեսաւ և այն հանգարտ շարժումը , որով առաւ փայլուն ամանը և օրհնուած ջուր սրսկեց ամէն կողմ , համոզուեցաւ թէ՛ անիկա սրտին խորէն էր որ կ'օրհնէր : Այն ատեն Աբօլօնիա բացաւ պարէններու սենեակը . երէցը օրհնեց հացը , կարկանդակները , բանջարեղէնները , պանիրը : Աբօլօնիա երկու խոշոր կտոր հաց , հինգ կարկանդակ ու չոր թուղերու պսակ մը գրաւ մախաղին մէջ : Յետոյ երէցին հետ խոհանոց մտաւ և վախնալով բացաւ ննջասենեակին դուռը . . . : Պատուհանէն ոսկեղօծ , մաքուր լոյսը ներս կը թափէր : Ծուռը բռնած , տփուռնելու անխօս , Աբօլօնիա երէցին նայեցաւ . նուրբ տփուռնութիւն մը պատեց անոր դէմքն ալ . բռնեց իր ձեռքը և առանց դողդղալու օրհնութիւն սրսկեց ամուսնական անկողնին , որպէս զի ան բեղմնաւոր ըլլայ . . . : Այն ատեն Աբօլօնիա ձեռքի դրամը դոյլին մէջ ձգեց ու իր աչքէն արցունք մը ինկաւ օրհնուած ջուրին մէջ , պղտիկ չրջանակ մը շինելով այն մեծ չրջանակին շուրջը՝ զոր դրամը հոն խնալով բացեր էր . . . :

ՏԻԿԻՆ ԿՐԱՅՅԻԱ ՏԷԼԵՏՏԱ

Թարգմ. ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ

ՍԿԶԲՈՒՆՔԻ ԽՆԴԻՐ ՄԸ

«ԱՐԱՆԻՆԻ»-Ի «ՔՆՆԱԴԱՏ»-ԻՆ

«Առաջնորդական խնդիրներ» վերնագիրով երկար յօդուած մը երեւցաւ, անցեալ շաբաթու **Արեւիկի** մէջ : Յօդուածագիրը ստորագրած էր **Քննադատ** : Հետաքրքրուեցայ գիտնալ թէ ո՞վ է այս նոր ծածկանունին տէրը : Բայց մէկէ մը չկրցայ որոշ բան մը խմանալ . ամէնքն ալ ենթադրութիւններ կ'ընէին : Կարծողներ գտնուեցան թէ՛ անիկա նորօրինակ Գամէլէտն է, որ շարունակ պէտքերն ու պարագային համեմատ գոյն ու անուն կը փոխէ : Ուրիշներ ալ հուսատեցին թէ՛ անիկա եկեղեցիի պաշտօնեայ մըն է՝ նոյն ինքն Ռ. Յ. Պէրպէրեանի **Քարեկամ Վ. Ը.** : Մենք ո'չ յիշեալ **Քննադատ**ին անձը, ո'չ ալ անոր այդ յօդուածը որ և է մասնաւոր հետաքրքրութեան առարկայ չլիարի դարձնէինք, եթէ զազտնի անունով ստորագրուած այդ յօդուածը չը նկատէինք իբր խիղճի ու բարոյականի դէմ մեղանշող տղեղ արարք մը : Տեսէ՛ք թէ ինչո՞ւ : **Քննադատ** իր այդ յօդուածով կարգ մը նոր պաշտօնի կոչուած, կամ արդէն պաշտօնի վրայ գտնուող առաջնորդներու մասին իր տեսութիւնները պարզեց զատ, — տեսութիւններ որոնց համար ըսելիք մը չունինք մենք, բանի որ քննադատութեանը ողջ ըլլալով իրենք կրնան ինքզինքնին պաշտպանել, եթէ տեղի կայ, — երկարօրէն կը խօսի նաև Սեբաստիայի հանգուցեալ Առաջնորդին՝ Պետրոս Արքեպիսկոփի վրայ, զոր շատ աննպատակ գոյներով կը ներկայացնէ, իբր հասարակ մահկանացու եկեղեցական մը, որուն անձը, անունը, գործը ոչ մէկ կերպով աւելի բան մը արժած է և որ **Թերեւս** մեծ տարբերութիւն մըն ալ ունեցած չէ, իրեն հետ նոյն ատենները վախճանող ուրիշ Արքեպիսկոպոսէ մը : Թահմիզեան Սրբազանի մասին մենք մինչև հիմա բոլորովին տարբեր գաղափար մը կազմած էինք սակայն իր կենսագիրներուն գրածներէն դատելով, հաճողմ գոյացուցեր էինք որ՝ Թահմիզեան Եպիսկոպոսն, հին ոճով բարի մարդուկ մը և բարի եկեղեցական մըն էր, ուսեալ այնչափ որչափ դար մը առաջ Սեբաստիա

ծնած և ամբողջ կեանքը Սեբաստիայի մէջ անցուցած մէկը կրնար ըլլալ . հաւատարմորէ այնպէս ինչպէս պիտի կրնար ըլլալ այդ միջավայրին մէջ ապրող և իր միտքով զարգացումը ունեցող մէկը : Իր միտքին ու հոգիին վիճակը այնպէս ծանօթ ըլլալով մեզի, անշուշտ խաբկանքը չէինք կրնար ունենալ բաղդատութեան զնելու զինքը հիմակուան նոր ոճով եկեղեցականներուն հետ, ո'չ ալ իրաւունք կ'ունենայինք իր առաջնորդութեանն սպասելու վարչական ու կրթական յիշատակելի յաջողութիւններ, յառաջդիմութիւններ : Ինչ որ ներբողելի գտած էինք իր մէջ, իր եկեղեցին պաշտող, մաքուր եկեղեցականի անշահասէր կեանքն էր, որուն շնորհիւ կրցեր էր իր վիճակայիններուն պատկառանք ազդել անխտիր ու անոնցմէ հաւատարմութեամբ խորհիլ, յարգուիլ : Անիկա, գաւառացիին համար շինիչ եղող իր ջերմ հաւատքին, մաքուր բարոյականին, հաշտասէր նկարագրին և ուսումը չանարգող միտքին շնորհիւ կրցած էր շուրջ կէս դար նոյն ամոռին վրայ մնալ և նոյն ամոռին վրայ մեռնիլ, բարի, պարզուկ մարդու և մաքուր, անշահասէր եկեղեցականի անուշ յիշատակով : Այս անուշ յիշատակն է զոր **Քննադատ** իր նկրտի աղարտել իր հետեւեալ տողերով . —

Պետրոս Սրբազան թէ Սեբաստիայի բողոքականիցներէն եւ թէ տեղական մամուլէն հռչակուեցաւ իբր ճիշդ եկեղեցական եւ իր մասին գրուածները աստուածացումներ էին պարզապէս : Սեբաստիայի մը տեղուղը ինքզինքն զգած էր առաջնորդական մնանկ վարչութեան մը տակ, որ իրեն համար բնական կը բուէր : Պետրոս Սրբազանի առաջնորդութեան ժառանգման վերաբերող պատմութիւններ ալ հիշեալներու տպաւորութիւնը կ'ընկնէ, հանի որ տարիքը առած, չորակաց, աւանդապան, նոյն ատեն լայնախոյն (°) 90 ամեայ ծերունիի մը նգնագեցեաց տուրքի կենդանի արձանին առջեւ կը գտնուէին Սեբասացիներն ու լրագիրները : Ո'չ մէկը բան մը ըսաւ անոր նախորդին, իրեն չափ երկարամեայ և մանաւանդ արդիւնաւոր ծերունի առաջնորդի մը պաշտօնավարութեան մասին : Ո'չ ոք կրցաւ վեր-

լուծել քէ Պետրոս Վարդապետ ինչո՞ւ համար իր հախարհին արքային վրայ չընտան։ Ո՛ր ոք ուղեց հասկնալ քէ Կարապետ եպսկ. Կեն ընացած Ս. Նշանի շէն ու ճոխ վանքին հարսնութիւնները ո՞ւր գացին։ Ո՛չ ոք չէտեսներուցաւ քէ Պետրոս Վարդապետ ինչո՞ւ համար չորակաց կամ միաժուով կ'ապրէր, ձգնաւորի հովեր կ'առնէր. ինչո՞ւ համար պաշտօնապէս դրամ չէր սիրեր եւ այլն, եւ այլն։ Ասոնք անցեան խնդիրներ չէին, բայց գրեթէ դար մը ապրող մարդուն պատշաճական կեանքին սկիզբները անցեալ էին ալ եւ ժամօք չէին կրնար ըլլալ այս օրուան գողներու։ Թէ Պետրոս Սրբազան եղած ցկարագրութիւններուն համեմատ իշխար եկեղեցական մըն էր, շատ վերացականութիւններ կարելի է ընել այս մասին։ Մենք կ'ըսենք որ Պետրոս Սրբազան հասարակ մահականացու մըն էր եւ իր բարեբանեալ իշխար եկեղեցականի յատկութիւններէն Սերասիա չօգտուցաւ։ Թանկագին տունը իր դիրքով ու ազդեցութիւնով, 50 տարի առաջ, Սերասիայի մէջ ամեն բանէր, առաջնորդական գործերու ցկատմամբ։ Բարսեղ, ինչեղծ երիտասարդ մը որ չպիտի կրնար աշխարհականութեան մէջ մասնաւոր յայտնութիւններ մտնի քերել, եկեղեցականութեան տուալ իմացիմը եւ Թանկագին տունին ազդեցութիւնը ամեն դիրքութիւն ընծայեց իրեն մտայնորդական նոյնակը խելոյն եւ մոռցնել տալու իր անունին ու գործին շուրջը հիշուած գրոյցները, որոնց վրայ ժամանակներու անցնելով, ալ անյիշատակի դարձան, նոյն իսկ «Հարոյ»-ն զգիտելու չարի անարատ անցեալ մը պարզելով պարզաւիճեցնուաւ եւ դիրաւհաւաններու աջին առջեւ։

Մենք Պետրոս Արքեպիսկոպոսը չենք տեսած, չենք ճանչնար։ Բնակարանին այս ըստաներուն ստոյգ, ճշմարիտ ըլլալը մեզի համար անճանապէս մասնաւոր կարեւորութիւն մը չէ կրնար ունենալ ուրեմն։ Առաջ անարժանեկութեւն եւ անարժէքներու լեզունին վրայ հաստ մըն ալ աւելցած պիտի ըլլար, ուրիշ ոչինչ։ Բայց սկզբունքի ծայր աստիճան կա-

րեւոր, կենսական խնդիր մը կայ մէջտեղը, զոր կ'ուզեմ վեր հանել։ Մեռեալի մը յիշատակը անխուսեղոր կ'աղարտուի, քի ո՛ր անձեղի կերպով փառարանուած յիշատակ մը իր իրական արժեքին կ'իջեցուի։ Թանկագին Սրբազանի մահէն ետքը, թէ անկական մահովը իր կողմէն եւ թէ զաւատական թողակցութիւններ մեծ զոյնետով խօսեցան անոր մասին։ Մասնաւորաբար Բէշեան էֆ. որ բաւերուն արժէքը գիտէ եւ «Հարոյ» որ մասնաւոր կողերականները ներքոյն մէջ շատ փութկոտ չէ, ցոյց տուին զինքը, իրր հին ոճով եկեղեցականի պատուական տիպար մը, որքէ օրինակ կրնան տանել շատ մը նորերէններ։ Համակարանի այս ընդհանուր ցոյցերը շատ նպատաւոր զարգացում մը կազմել տուին իր մասին եւ իր յիշատակը ամէնուն համար եղաւ բարի պատուական եկեղեցականի մը, սիրուած, յարգուած յիշատակը։ Հիմա, այդ յիշատակն է զոր Բնակարան յախուսութիւն տիպի մէջ կը թափուի իր վերջին տողերով։ Արդ, իր այդ տողերը կամ շարժարձակ ճշմարտութիւններ են՝ որ ասեմ անոնք իր ամենաճանաչ յայտնութիւններ Թանկագին եպիսկոպոսը մար կը նկատէ իր փառքի պատուանդանէն ու կը հաւատարմեցնէ զինքը շատ ուրիշներու, եւ կամ անոնք ճիշտ յիշատակներ են՝ որ ասեմ իր ամենաաղօթք գրաւարտութիւններ մեռեալի մը յիշատակը վայրապար կ'աղարտեն։ Խնդիր է գիտնալ ուրեմն թէ՛ Բնակարան ըստաները որ աստիճան ճշմարիտ են, իրողութիւն են Մեր կարծիքով անոնք ճշմարտանման չեն երբեք։ Բնակարան իր ըստաներուն եւ ոչ մէկը կ'ապացուցանէ։ Խորհրդաւոր հարցումներ, նպատակաւոր թելադրութիւններ (insinuation) կ'ընէ միայն, սրունց պատասխանատուութիւնը ստանձնելու քաջութիւնն ալ չունի։ Ըողի տակ կը պահուրանի, ժամանակներ տալիս կ'ապաստանի։ Թանկագին ներքոյ կարդացողները, իրենք, ըստաներուն ճշմարտութեանը վստահ, իրենց բուն անունով կամ իրենց զրական ծանօթ անունով գրեցին աննկատ։ Մենք շատ աւելի պատճառ ունինք հաւատարմութեան ըստաներուն՝ որոնք ճշմարտութեանը դրոշմը կը կրեն իրենց վրայ, ըսն

Քննադատին՝ որ կոնակէն հարուած տուողի մը տպաւորութիւնը կը գործէ։ Մեզի՝ ինչպէս և բոլոր ողջամիտ ընթերցողներուն համար ուրեմն Քննադատին զրաճները, հանդիպին կարծիքով մաքուր նախընտրած յիշատակ մը մրտնչելու, աղաւտելու դիտումով զրուած հասարակ զրպարտութիւններ են, և իբր այն պիտի մնան, որչափ առեն որ Քննադատ չը կարենայ հաստատել, ազգացուցանել իր մէջտեղ նետած Թելադրութիւններուն (insinuation) ճշմարիտ, իրաւացի ըլլալը։

ԱՐԲՆԵՍԱԿ ԻՆՃԷՆՍՆ

[Փառաբան]

Ուշագրութիւն . —

Մաախի խմբագրատունը փոխադրուած է Պապը Ալի ձառագործի, Թիւ 38, ո՛րը պէտք է ուղղել ասկէ ետքը, նամակ կամ ո՛ր և է գրութիւն։

§ Հանցյեղով կ'արձանագրենք՝ Թէ՛ իզմիրի ազգայիններէն գրաւանառ Բարսեղ էֆ. Քէշիշեանի որ շարժուա Պոլիս ժամանեց՝ շնորհուած է **Արաւոյա** անունով հայերէն օրաթերթի մը արտօնութիւնը։ Կը շնորհաւորենք մեր նոր պաշտօնակիցը եւ յաջողութիւն կը մաղթենք։

§ Հանցյեղով կը ծանուցանենք նաեւ Թէ՛ Կայս. Իրատէով արտօնուած է՝ հրատարակութիւնը **Փունջ** լրագիրին, որուն տնօրէնութիւնը եւ խմբագրութիւնը պիտի վարէ հանգուցեալ Ռիմադիրին որդին Տիար Սիմոն Հ. Ալամանեան, իսկ Թերթին պատասխանատուութիւնը տանձնած է **Բարակին** առեւտրական շաքամածերթին խմբագիր Սիմոն էֆ. Չէօկէքճեան։ Կը խնդակցինք եւ յաջողութիւն կը մաղթենք։

§ Մեր շնորհակալութիւնները՝ **Ճերիսի Եարգիլէ** օրաթերթին և **Բարակին** առեւտրական շաքամածերթին՝ որոնք համակիր տողերով արձանագրած էին **Մաախի** վերաբացումը։

§ Եղիշէ Եպիսկ. Դուբեանի նախորդ շաբաթուան «Եռդայի Համրոյրը» բերձուածին մէջ՝ Թնդէ իր «Ժափը» կարգալ «դափը»։

ԷՋ ՄԸ ԵՐՐԱՅԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

Դ.

Այսպէս, սրբութեան մէջ ապրած, ապիսակներու մէջ փառաբանուած կ'աղօթին։ Արդէն այս միաբանութեան պաշտօնական սարագր եղած է ապիսակ զգեստը, եր մաքուրութեան նշանակ է։ Միանգամայն կը հագուէին տեսակ մը վերաւոր, շինուած ոչ թէ բուրդէ, այլ բրանէ եւ. զայն կը կոչէին *մեհեղ* (mehel)։ Իրենց մէջէն ալ կը կապէին գօտի մը, որմէ կը կախէին *սօշապ-րա* (dolabra) կոչուած կացիկ մը, (Ի. Սաշկոնց, նոյն երկամիւրութեան մէջ *սօշար* բառը գործածած է. գրչագրութեան վիճակ ըլլալու է) իբր աշխատանքի նշանակ։ Այս դեռական մաքուրիւնը, սրբութիւնը, ծայրապետութեան սարած են։ Ո՛չ մէկ արատ պէտք էր բծաւորէր զիրենք. ոչ թէ զգեստի մասին մաքուր ըլլալու էր, այլ իրենց բերնէն ալ մաքուր խօսք ելլելու էր։ Հայնուցներէն, յիշեցներէն, լուսանկներէն կը զգուստանային։ Ենթադրեալ հանելի ըլլալու համար՝ կարեւոր էր հաւել համեստութիւն, զգուստութիւն։ Համեստութիւնը, ասոնց համար կարեւոր նշանակութիւն ունեցած է եւ կը նկատէին զայն իբր նշանակութեան մայրը. քննակալութիւն՝ պերհանքի եւ գոռոզ հպարտութիւնը՝ ստութեան հայրը։ Նշանակութիւն եւ ստութիւն, անոնց համար երկու աղբիւրներ էին. մէկը՝ բովանդակ բարութեանց ակն էր, մինչդեռ միւսը՝ ամէն աղէտներուն, աւերներուն, մոլորութիւններուն։ Աստուծմէ ետք, իրենց սիրելի եղած է Մովսէս Մարգարէն, որուն Հնգամասեանը եղած է իրենց բարոյականութեան գիրքը, եզրապատկերներուն հով. «Պաւնը» ի՛նչ պաշտօններու եւ յարգանքներու արժանացած է, նոյնը եղած է Մովսէս իրենց համար։ Ակնածու պաշկառանգով կը յարգէին զայն, միանգամայն Հնգամասեանը՝ իբր իրենց Օրինագիրք։ Կը յարգէին նոյնպէս Շաբարը՝ իբր հովաքանութեան օր։

[Յաջորդով]

ԴԱՆԷԼ ՆՇԱՆԱՆ

ՆՈՐՎԵԿԻՍՅՈՒՆ ԼԱՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՐ ՄԱՆԸ

Յուլիս 8ին Նորվեկիայի մէջ մեռած է նշանաւոր լեզուաբան Սոփոս Բուգգէ (Sophus Bugge) որ մասնակի կերպով Հայ լեզուաբանութեան ալ ծառայութիւններ մատուցած է: Իր կենսագրութիւնը, զոր գրած է Սքանտինաւեան երկիրներու ներկայ միակ հայագէտ Բրոֆ. Պետերսըն, կը ներկայացնէր համառօտ կերպով, գաղափար մը տալու համար հանգուցեալ լեզուաբանին կարողութեան վրայ:—

Ծնած է 1833 Յունվ. 5ին, Նորվեկիոյ Լաուվիկ քաղաքին մէջ: 1848ին համալսարան մտած է և 1857ին բանասիրական քննութիւն տուած: 1858ին Քրէննուկի մէջ կը սկսի ուսանիլ արեւելեան և դասական լեզուներ, յետոյ կ'անցնի Պերլին, ուր կը մշակէ Սանսկրիտերէնը: 1860ին Քրիսթիանիոյ համալսարանին մէջ համեմատական լեզուագիտութեան առժամեայ ուսուցիչ կ'ըլլայ և 1866ին վերջնական ուսուցիչ կը կարգուի: Իր գլխաւոր մասնագիտութիւնն էր հիւսիսային հին լեզուները և հին անգլերէնը: Իրեն կը պարտի իտալական աշխարհը Runeu (=Գաղտնիք) անունով գիրերու լուծումը, զոր ինք կրցած է զանել: Այն արձանագրութիւնները, որոնց հետքը Քրիստոսի Դ. Դարէն սկսեալ կը տեսնուի, Սքանտինաւեան երկիրներու ամենահին յիշատակարաններու լեզուէն շատ տարբեր լեզու մը ունին: Իր Նորվեկիոյ Արձանագրութիւնները ամենահին Ռունկոտեքնոյ վերնագիրով հոյակապ գործը, որ իր գլուխ-գործոցը կը համարուի, 1891էն ի վեր մաս մաս կը հրատարակէ եւ տակաւին լրացած չէ: Ինքն էր որ նաեւ հակառակ ընդհանուր դժգոհութեան, գիտական հիմքերու վրայ ապացոյցը տուաւ թէ Edda կոչուած Սքանտինաւեան երգերը չունին այն հումորները որ իրենց կ'ընծայուի: Անոնց մէջ ցոյց տուաւ քրիստոնեայ և դասականապէս մշակուած աշխարհներու ազդեցութիւնը՝ որ միակ ժամանակագրական յարաբերութիւնը կրնար համարուիլ անոնց ժամանակին: Ունի նաեւ Լատին մատենագրական և իտալական արձանագրութիւններու իրաւ ուսում-

նասիրութիւններ, որոնք իրենց խիզախ եզրակացութիւններով ազդեցուցիչ են՝ յաճախ ենթադրութեանց լայն տեղ տրուած ըլլալուն համար: Նոյնը կրնայ ըսուիլ նաեւ իր Հայ լեզուի վրայ յայտնած կարծիքներուն մասին որոնք շատ տարօրինակ են: Պետերսընի կարծիքով՝ Ռուգգէ ինչ ինչ բաներ հայերէնի հետ կապել կ'ուզէր, մինչ հայերէնի հետ ամենեւին կապակցութիւն չունէին: Այսպէս, Հայերէնին՝ Աղբուսկերէնի և Լիւկերէնի հետ ենթադրական յարաբերութիւնները, որոնց վրայ հատորներ գրած է, պարզապէս այսօր զոյրութեան իրաւունքէ զուրկ աշխատութիւններ են: Նոյնպէս շատ անտրամաբանական է իր սա կարծիքը թէ՛ Ս. Գիրքի Գոթերէն թարգմանութեան վրայ Հայ ազդեցութիւնը կայ, նաեւ Ռուէն այրութիւնի վրայ հայերէնին ազդեցութիւնը մտած ըլլայ, ենթադրութիւններ՝ զորս չէ կրցած ո՛ր և է կերպով շօշափելի ապացոյցներով երեւան հանել: Սակայն ասոնց քով պէտք չէ մոռնալ թէ իրական ծառայութիւններ մատուցած է Հայ լեզուին, իր ստուգաբանական աշխատութիւններուն մէջ բազմաթիւ Հայ բառերու ստուգաբանութիւնը ծանօթացնելով: Բրոֆ. Հիւպըման թէեւ անոնց արժէքն ալ տարակոյսի տակ կը ձգէ, սակայն Բրոֆ. Պետերսըն կը պարզէ թէ «Ռուգգէ հայերէնի, ինչպէս նաեւ ուրիշ լեզուներու մէջ հոյակապ ստուգաբան ցուցուցած է ինքզինքը»: Նոյն իսկ անիրաւ կը նկատէ Հիւպըմանի կարգ մը բառերու համար Բուգգէի ստուգաբանութիւնները մերժելը: Իր խօսքերը կը փակէ սա շահեկան տողերով՝ որոնք կրնան Բուգգէի բովանդակ զործունէութեան պատկերը ըլլալ: «Բուգգէ հանճարեղ լեզուաբան մըն էր. կարելի չէ տարակուսիլ որ եւրոպայի ամենամեծ լեզուաբաններու կարգէն է: Միայն թէ բարձր աստիճանով ունէր սխալելու քաղաքականութիւնը»:

Ստացանք Գասպար Գրատունէն՝ Թուրք լեզուագէտ Ալի Նազկիւմ Էֆ. ի յորինած ֆրանսերէնէ-Թուրքերէն Բառագիրքը, 1700 էջերէ բաղկացած ասուար հատոր մը, խնամուած տպագրութեամբ: Հեղինակաւոր ու խղճամիտ աշխատութիւն մըն է՝ Գասպար Գրատունի հրատարակած այս Բառագիրքը:

Հիմնադիր Կ. Ս. ԻԻՓԻԻՃԵԱՆ Արտոնահր. ՏՕ ԲԹ. Ե. ՄԱՍԻՍ. Տպագր. ՃԻՀԱՆ

ԱՌՓՈՍԹՈՒԷՔ ԻՆՍԹԻԹԻԹ, ԳՈՆԵԱ (ՃԵՆԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ)

Վարժարանի անսխիական տարեկրջանը կը սկսի Սեպտ. 13/26ին : Հաստատութիւնս կէտ նպատակի ունենալով գոլէճական ծրագրով մը բարձր և միանգամայն գործնական կրթութիւն մը տալ ուսանողներուն մասնագէտ դասաւանդներու միջոցաւ , կ'աւանդէ Օսմ . Հայ . Անգլ . Գերման . և Յունարէն (Յոյն աշակերտներու համար) լեզուները , ինչպէս նաեւ ընտկան , ընտպատմական , ուսողական , փիլիսոփայական , իրաւագիրական և վաճառականական գիտութիւնները : Մեծ խնամք կը անի աշակերտներու բարոյայան մաքրութեան և ֆիզիքական ասողջութեան : Գործողական նոր տարուան համար ուսուցչական մարմինին վրայ աւելցած է նաեւ համալսարանական լսիչի մը՝ որ պիտի դասաւանդէ առողջապահական և ընտկան գիտութիւններ և ձրիապէս պիտի դարձնէ հիւանդացող աշակերտները , եթէ գտնուին : Գիշերօթիկներու տարեթուական է 10 Օսմ . ոսկի , որուն կէսը վճարելի կանխիկ և միւս կէսը Մոսկովին : Մանրամասն տեղեկութեան համար գրմել Տնօրէն Տօքթ . Ա . Յ . Հայկապետեանի , Գանիա :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ՀԻՆՈՐԵՐ

Պուէտ Խաչատուր Միսաքեան

Եւ իր ժամանակակից իմացականին վրայ նայեացմներ

ԳՐԵՑ Ե. Գ. ՄԵՐՔՐԵՍԱՆ

ԺԺ. րդ Դարու Թրքահայերու իմացական , բարոյական և արուեստական վիճակին վրայ վաւերական յիշատակագիրներով զարդարուած հատոր մըն է՝ 140ի չափ էջերով , որ կը խօսի Պուէտ Խաչատուր Միսաքեանի և իր ժամանակակից մտաւորականներուն վրայ : Կը ծախուի Կ. Պոլիս բոլոր գրաւաճառներուն քով , գին 7½ դրուշ :

ՄԱՆՁՈՒՄ Է Միակ առաւումն Հայսթիկթը , կը հրատարակուի արշալոյսին , և առաւուն խիստ կանուխ՝ կը գտնուի Պոլիսի և արուարձաններու ամէն կողմը , բովանդակելով հեռագիրներ , քաղաքական , ներքին , եկեղեցական ու կրթական լուրեր , գրական , տնտեսական և ընկերային յօդուածներ : Չօրեքշարթի ևւ չարաթ օրերը կը հրատարակուի առանց ծանուցումի , չորրորդ էջը յատկացնելով առեւտրական և գրական գրուածքներու : Գինն է 10 փարա : Տարեկան ըստ ժանորդագրութիւնն է Պոլիս՝ 80 դրշ . , գաւառ՝ 108 , արտասահման՝ 25 ֆր . : Վեցամսեայ՝ Պոլիս՝ 50 , գաւառ՝ 60 , արտասահման՝ 18 ֆր . : Ամէն գրութիւն ուղղել Տէր ևւ Տնօրէն Յովհաննէս Զ. էֆ . Դայսէրեանի հասցէին՝ 38, Պապը Ալի Ճատաէսի :

ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐԷՍԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԵԱՆ ԸՆԿ.

ՊԱՆՔԱՆ

Դրամագլուխ և պահեստ Ծրանք 9,500,000
Վերապահովագրական
դրամագլուխ և պահեստ » 142,740,000

ՊԱՆՔԱՆ Ընկերութիւնը կ'ապահովագրէ հրդեհի դէմ ամէն տեսակ կահ կարասի եւ, Կ. Պոլսոյ և Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ շատ զիւրամատչելի պայմաններով. իսկ իր միւս երկրորդ ճիւղը անմրցելի զիններով և պայմաններով օժտուած է. կը կատարէ խառն ապահովագրութիւն, ընտանեկան, մանուկներու, եւն. եւն.:

Ընդհանուր գործակալ Թուրքիոյ ԱՐՇԱԿ ՈՒՆՃԵԱՆ
Ղալաթիա, Տեօյէ Թրիեմդ Պանքի կից, Սինասօն Խան.



Կը գանուի բոլոր
դեղագործներուն քով:
Թուրքիոյ ներկայա-
ցուցիչ Ո. Սօլաքեանց.
Կ. Պոլիս:

ՀԱՅՈՒՇԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ, ԱՏԱԲԱԶԱՐ

Հայուհեաց Վարժարանի նպատակն է Հայ աղջիկներուն տալ լուրջ դաստիարակութիւն մը՝ զարգացած և բարեկիրթ տանտիկիներ և դաստիարակութեան գործին օժանդակներ պատրաստելու համար: Վարժարանին տեսչութիւնը աշակերտութիւններուն ֆիզիքական, իմացական և բարոյական զարգացումը միշտ խղճամիտ հոգածութեան առարկայ կ'ընէ: Բնիկ և Ամերիկացի 12 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը կ'աւանդէ Հայ, Անգլ., Թուրք. և Յիւսիս. լեզուները, ինչպէս նաեւ ընական, իմաստասիրական, չափական և ուրիշ գիտութիւններ: Մնայուն կարուհի մը կ'աւանդէ ձեռագիտութեան, կարի և ձեռագործի դասերը: Գիշերօթիկներու տարեթոշակն է 12 օսմ. ոսկի, որուն կէսը պէտք է հատուցանել տարեշրջանին սկիզբը և կէսը Ծնունդի արձակուրդին: Դաշնակի և երգեհոնի համար կը պահանջուի 5, 3 և 2 1/2 օսմ. ոսկի, դասառութեան թիւին համեմատ: Վարժարանին յառաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 11ին (Ն. Տ.), Դշ. իրիկունը: Աւելի տեղեկութեանց համար խնդրել Վարժարանին Յայտագրը կամ գիմնել Մր. Բիթի, Պայպըլ Հաուս, Կ. Պոլիս, կամ գրել Տօքթ. Ս. Էֆ. Գալալճեանի, Ատենապետ Խնամակալութեան, Ատաբաղար:

“ՄԱՍԻՍ, Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և դաւաններու համար տարեկան 60 դրշ :

Արտասահմանի » » 14 ֆրանք :

Թղթատարութեան ծախքը մեր վրայ :

Բաժանորդները իրաւունք ունին ուսանալու մեր պարզեւները,

միշտ ձրիաբար, թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ :

Մասիսի բաժանորդագրութիւնը յայտարարականէս կա խիկ է :

Զհրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր :

Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել առ

Ե Ն Ո Վ Ք Ա Ր Մ Է Ն

“ՄԱՍԻՍ, Ի Հասցեով

Պապը Ա.Լի ճասէսի, Թիւ 38

درعاليه باب عالی جاده سنده نومرو ۳۸ «ماسيس» غرتہ سی ادارہ خانہ سی

Rédaction de la Revue «MASSIS»

N. 38, Avenue de la Sublime Porte

CONSTANTINOPLE

ՌՕՊԷՐԴԳՅՈԼԷՃ Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 5/18ին : Կարգադրութիւններ եղած են վաճառականական ուսումը բազմացուած կատարելութեամբ աւանդելու համար : Վարժարանիս մասնաւոր բժիշկը՝ ուսանողներուն առողջութեան, մարմնամարդներուն և խաղերուն, ինչպէս նաեւ վարժարանիս ընդհանուր առողջական վիճակին վրայ կը հոկէ : Մարմնամարզի նոր և գեղեցիկ շէնք մը կառուցուած է նորոգապէս, իր մէջ ունենալով մարմնամարզի ամէն տեսակ գործիքներ, վերջին գրութեանց համաձայն :

ԲԱՅՍԱԹԻԿ ԱՌԻԹ ՄԸ ԴՐԱՍԵՐՆԵՐՈՒՆ. — ԶԱՐԴԱՐԵԱՆ ԴՐԱՍՈՒՆԷՆ. ՄԻԱՅՆ 20 ԴՐՈՒՇ՝ ՓՈԽԱՆ 60 ԴՐՈՒՇԻ : 1. Ասորա. Վէպ. Բ. Սիւլա. Թրգ. Թէրղեան 10 : 2. Ատրիեն. Վիպերգ. Բաղասարեան 10 : 3. Առողջապահութիւն. Տօքթ. Փէշաբմալեան 2½ : 4. Ներշնչմունք. Տ. Մէթեան 5 : 5. Իւրուսոյց Մերոս Անգլ. Քերականութեան. Ասատուրեան 15 : 6—7. Ամուսնական Խնդիրներ. 2 հատոր 2 : 8. Միոփանկ Ռամկիւն. Մ. Յովհաննէսեան 5 : 9. Ուղեցոյց Գրագիտութեան Թուրքերէն Լեզուի. Գալպեան 5 : 10. Պեսալոցցի. Լինհարա և Դերարուդ 5 : Այս 10 կտոր վիպական, առողջապահական, զբաղմունք, լեզուաբանական, բանաստեղծական և մանկավարժական գիրքերը՝ որոնք 60 դրուշ արժէք ունին, 20 դրուշի կը ծախուին Զարդարեան եղբայրներուն Դրատունէն՝ Բերա, Գուլէ-Գաբու թիւ 695, Դաւաններու համար 7 դրուշ աւելի : Գրասէրներ պէտք է փութան օգտուիլ այս առիթէն, զի մեղով վերեւի հասցէին, ուր կը ծախուին նաեւ ամէն տեսակ թուրքերէն, հայերէն և ֆրանսերէն նոր թէ գործածուած գիրքեր, աման և գիւրամատչելի գիներով :